

Հոկտեմբեր, 2023թ

# Երրորդ Անձանց Վարքագծի Գլոբալ

Կանոնակարգ

[www.pwc.com/thirdpartycodeofconduct](http://www.pwc.com/thirdpartycodeofconduct)

# Բովանդակություն

3

## Ներածություն

|                                                                                         |   |
|-----------------------------------------------------------------------------------------|---|
| Սահմանումներ                                                                            | 4 |
| Ազդարարում                                                                              | 5 |
| Համապատասխանություն սույն<br>Կանոնագրքի, օրենսդրության և<br>իրավական ակտերի պահանջներին | 5 |
| Համալիր ուսումնասիրություն և<br>մշտադիտարկում                                           | 5 |

6

## Վստահություն կառուցում մեր գործունեության նկատմամբ

|                                                |   |
|------------------------------------------------|---|
| Անկախություն                                   | 6 |
| Շահերի բախում և զգայուն իրավիճակներ            | 6 |
| Արդար մրցակցություն                            | 7 |
| Պայքար կոռուպցիայի և կաշառակերության<br>դեմ    | 7 |
| Տնտեսական հանցագործություն և փողերի<br>լվացում | 8 |
| Ինսայդերական գործառնություններ/<br>առևտուր     | 8 |
| Պատժամիջոցներ և արտահանման<br>հսկողություն     | 8 |

9

## Վստահություն կառուցում միմյանց նկատմամբ

|                                                         |    |
|---------------------------------------------------------|----|
| Աշխատանքի ընդունում և աշխատանքային<br>հարաբերություններ | 9  |
| Աշխատավարձ և աշխատանքային ժամեր                         | 9  |
| Երրորդ անձանց փոխգործակցություն<br>Անձնակազմի հետ       | 9  |
| Մանկական աշխատանք                                       | 10 |
| Մարդկանց թրաֆիքինգ և ժամանակակից<br>ստրկություն         | 10 |
| Աշխատանքի անվտանգություն և<br>առողջության պահպանում     | 10 |
| Միավորումների ազատություն                               | 10 |

11

## Վստահության կառուցում մեր համայնքներում

|                                   |    |
|-----------------------------------|----|
| Շրջակա միջավայրի<br>պահպանություն | 11 |
|-----------------------------------|----|

12

## Վստահություն կառուցում տեղեկատվության օգտագործման նկատմամբ

|                                             |    |
|---------------------------------------------|----|
| Գաղտնիություն և տվյալների<br>պաշտպանություն | 12 |
| Մտավոր սեփականություն                       | 12 |
| SS անվտանգություն                           | 12 |
| Սոցիալական հարթակներ                        | 13 |

13

## Սույն Կանոնագրքի ընդունումը



# Ներածություն

PwC-ն ճանաչված է որպես մասնագիտական ծառայությունների մատուցման գլոբալ առաջատար, և համագործակցում է աշխարհի առավել հայտնի կազմակերպությունների հետ: PwC-ի նպատակն է հասարակության մեջ ձևավորել վստահություն և հասցեագրել կարևոր խնդիրներ:

PwC-ն հանձնառու է գործել էթիկական և մասնագիտական չափանիշների, օրենսդրության և իրավական ակտերի, ներքին քաղաքականության շրջանակներում, և ներքոշարադրյալ հիմնական արժեքների ներքո.



## Գործել ազնիվ

- Բարձրաձայնել ճշմարտությունը, հատկապես, երբ դա դժվար է
- Ակնկալել և ապահովել ամենաբարձր որակի արդյունք
- Որոշում կայացնել և գործել այնպես, ինչպես եթե հարցը վերաբերեր մեր անձնական հեղինակությանը



## Ստեղծել փոփոխություն

- Լինել իրազեկ և հարցադրումներ կատարել աշխարհի ապագայի մասին, որը մեր ապրելու վայրն է
- Մեր գործողությունների միջոցով ազդեցություն ունենալ մեր գործընկերների, մեր հաճախորդների և հասարակության վրա
- Արագ արձագանքել մեր գործունեության իրականացման մշտապես փոփոխվող միջավայրին



## Դրսևորել հոգածություն

- Աշխատել ըմբռնել յուրաքանչյուր անհատին և գիտակցել, թե ինչն է նրա համար կարևոր
- Ճանաչել յուրաքանչյուր անհատի ստեղծած ներդրման արժեքը
- Աջակցել մյուսներին՝ աճելու և աշխատելու իրենց լավագույն ունակությունների դրսևորմամբ



## Փոխգործակցել

- Համագործակցել և համատեղել փոխհարաբերությունները, գաղափարները և գիտելիքները՝ դրանց սահմաններից դուրս
- Գտնել և ինտեգրել տարաբնույթ տեսակետների, անհատների և գաղափարների բազմազանությունը
- Ապահովել և տրամադրել հետադարձ կապ՝ նպաստելու ինքներս մեր և մեր գործընկերների կատարելագործմանը



## Վերափնաստա-վորել հնարավորը

- Համարձակ լինել վիճարկելու ստատուս քվոն և փորձել նորը
- Ստեղծել նորարար մոտեցումներ, փորձել դրանք և դասեր քաղել ձախողումից
- Բաց լինել յուրաքանչյուր նոր գաղափարի հնարավորությունների նկատմամբ

PwC-ն հանդիսանում է Միավորված ազգերի կազմակերպության Գլոբալ Համաձայնագրի («UNGC») ստորագրող կողմ, և հանձնառու UNGC-ի հիմնարար 10 սկզբունքներին: Այդ սկզբունքներն արտացոլված են սույն Կանոնագրքում:

PwC-ի Երրորդ անձանց վարքագծի կանոնագիրքը («Կանոնագիրք») բացատրում են ազնվության և գործարար վարքագծի նվազագույն չափանիշները, որոնք PwC-ն ակնկալում է իր հետ փոխգործակցող Երրորդ անձանցից: PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք ազնվության և գործարար վարքագծի նույն մակարդակը կպահանջեն նաև իրենց Անձնակազմից և իրենց կազմակերպությունից դուրս գտնվող բոլոր այն անձանցից, որոնք ներգրավված են PwC-ին կամ ի շահ վերջինիս ծառայությունների մատուցման համար:

PwC-ն ընդունում է, որ որևէ վարքագծի կանոնագիրք չի կարող լիարժեքորեն հասցեագրել յուրաքանչյուր հնարավոր իրավիճակները, որոնք կարող են առաջանալ Երրորդ անձանց համար: Ըստ այդմ, սույն Կանոնագիրքը չի փոխարինում Երրորդ անձանց կողմից ողջամիտ դատողության գործադրման և պատշաճ գործարար վարքագծի ուղեցույց հանդիսացող հաշվետվողականության և պատասխանատվության սեփական մեխանիզմները: Երրորդ անձանց խորհուրդ է տրվում լրացուցիչ ուղղորդում և աջակցություն ստանալ PwC-ից դիմելով այն անձանց, ովքեր նշանակված են որպես PwC-ին կամ ի շահ վերջինիս մատուցվող ծառայությունների համար պատասխանատու:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) ներկայացնում է ուղեցույցներ, ներառյալ բազմազգ ձեռնարկությունների համար նախատեսված ՏՀԶԿ ուղեցույցները (ՏՀԶԿ ուղեցույցներ)՝ որպես ոչ պարտադիր սկզբունքներ և չափանիշներ, գլոբալ մասշտաբով գործունեություն ծավալելիս պատասխանատու գործարար վարքագծի ապահովման ուղղությամբ: ՏՀԶԿ-ի ուղեցույցներն իրենցից ներկայացնում են համապատասխանության կիրառելի պահանջները և չափանիշները սահմանելու համար արժեքավոր շրջանակ: Թեև PwC ցանցը բաղկացած է ընկերություններից, որոնք առանձին իրավաբանական անձինք են, և չեն կազմում բազմազգ կորպորացիա կամ ձեռնարկություն, PwC-ի ցանցի ստանդարտները և քաղաքականությունը հիմնված են և համապատասխանում են ՏՀԶԿ-ի Ուղեցույցների նպատակներին և խնդիրներին:

## Սահմանումներ

### Երրորդ անձ/ Երրորդ անձինք

Կազմակերպություններ (ներառյալ նրանց Անձնակազմը\*) կամ անհատներ, որոնք ներգրավված են ենթակապալառության հիմունքով աշխատելու PwC-ի հետ կամ ի շահ վերջինիս, կամ որոնք ապրանքներ կամ ծառայություններ են մատուցում PwC-ին:

\* Անձնակազմ. Երրորդ անձանց աշխատակիցներ կամ ենթակապալառուներ:

## Ազդարարում

### Մեր ստանդարտը

PwC-ն հանձնառու է հասցեագրել հնարավոր խախտումները և պաշտպանել իր գործընկերներին/տնօրեններին և անձնակազմին վրեժխնդրության դրսևորումներից՝ իրենց մտահոգությունները կամավոր բարձրաձայնելու համար:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

PwC-ն ակնկալում է Երրորդ անձանցից կամավոր հաղորդել ցանկացած մտահոգություն, որ կարող է առաջանալ PwC-ի գործունեության (ներառյալ PwC-ին ապրանքների կամ ծառայությունների տրամադրման) և սույն կանոնագրքի, օրենսդրության, իրավական ակտերի կամ էթիկական կամ մասնագիտական չափանիշների հնարավոր խախտումների առնչությամբ:

Օրենսդրությամբ կամ իրավական ակտերով արգելված չլինելու դեպքում, PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կբարձրաձայնեն սույն Կանոնագրքի հետ կապված մտահոգությունները հետևյալ կապուղիներից որևէ մեկով.

- իրազեկելով համապատասխան անձանց, ովքեր նշանակված են PwC-ին կամ ի շահ վերջինիս Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայության (ծառայությունների) պատասխանատու .
- օգտագործելով PwC-ում սահմանված համապատասխան կապուղիները.
- կապ հաստատելով PwC-ի էթիկայի և Համապատասխանության Գլոբալ օժանդակության թիմի հետ՝ [pwc.com/ethics](http://pwc.com/ethics) հասցեով: Մտահոգությունները կարող են անանուն հաղորդվել:

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք տեղեկացնեն իրենց Անձնակազմին առ այն, որ իրենք չեն ենթարկվի վրեժխնդրության՝ իրենց մտահոգությունները կամովին ազդարարելու արդյունքում:

PwC-ն կուսումնասիրի/կհետաքննի հաղորդված մտահոգությունները և կհաղորդի Երրորդ անձանց, որոնց առնչությամբ, ըստ անհրաժեշտության, պետք է կատարվի իրավիճակի կառավարում կամ հետաքննություն:

## Համապատասխանություն սույն Կանոնագրքի, օրենսդրության և իրավական ակտերի պահանջներին

Երրորդ անձինք պարտավոր են պահպանել տեղական և միջազգային գործող օրենսդրության և իրավական ակտերի պահանջները. Երրորդ անձանցից ակնկալվում է պահպանել սույն Կանոնագրքի պահանջները: Եթե գործող օրենսդրության և իրավական ակտերի պահանջներն ավելի խիստ են, քան սույն Կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, կգործի տվյալ օրենքը կամ իրավական ակտը:

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կներդնեն քաղաքականություն, ընթացակարգեր և վերապատրաստման միջոցառումներ, ելնելով Երրորդ անձանց կարիքներից, սույն կանոնագրքի պահանջների պահպանումը ապահովելու համար:

## Համալիր ուսումնասիրություն (due diligence) և մշտադիտարկում

### Մեր ստանդարտը

PwC-ն հանձնառու է մշտադիտարկել իր ներքին ստանդարտների և քաղաքականության պահանջների պահպանումը: Մեր ստանդարտների և քաղաքականության պահանջների պահպանումը PwC-ի հաջողության կարևոր բաղադրիչներից է:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կներդնեն գործընթացներ և հսկողության միջոցներ՝ սույն Կանոնագրքի պահանջները պահպանելու համար:

Անհրաժեշտության դեպքում, PwC-ն Երրորդ անձանց նկատմամբ իրականացնում է ռիսկերի վրա հիմնված համալիր ուսումնասիրություն, Երրորդ անձանց հետ իր հարաբերությունների գնահատման շրջանակներում: PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք ըստ պահանջի կտրամադրեն ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն՝ PwC-ի կողմից ձեռնարկվող համալիր ուսումնասիրության գործընթացը դյուրացնելու նպատակով:

Եթե PwC-ի գնահատմամբ Երրորդ անձը խախտել է սույն Կանոնագիրքը, ապա նա կարող է պահանջել Երրորդ անձանցից իրականացնել մեղմման ծրագիր, կամ, որոշակի հանգամանքներում, կարող է կասեցնել կամ դադարեցնել Երրորդ անձանց հետ իր փոխհարաբերությունները:



# Վստահության կառուցում մեր

## Անկախություն

### Մեր ստանդարտը

PwC-ի մասնագիտական գործունեությունը կարգավորման ենթակա ոլորտ է, որի շրջանակում ակնկալվում է պահպանել առողիտի հաճախորդների նկատմամբ անկախության պահպանման գծով կիրառելի օրենքները և տեղական և միջազգային ստանդարտները և պարտավորությունները: PwC-ն նախաձեռնողական հիմունքով աշխատում է զերծ մնալ և հասցեագրել այն հանգամանքները, որոնք վտանգում են, կամ առերևույթ վտանգում են իր անկախությանը: Անաչառության և օբյեկտիվության հիմնարար սկզբունքներին հավաստարմությունը բոլոր մասնագիտական ծառայությունների մատուցման կարևոր տարր է, և անկախության պահպանումը նպաստում է PwC-ի կողմից իր հաճախորդներին հավաստիացման ծառայություններ մատուցելիս այդ սկզբունքների պահպանմանը:

PwC-ի սահմանմամբ անկախություն նշանակում է զերծ լինել որևէ տեսակի շահերից և հարաբերություններից, որոնք խաթարում են կամ առերևույթ խաթարում են PwC-ի օբյեկտիվությունը հավաստիացման ծառայություններ մատուցելու ընթացքում:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Կարող են լինել հանգամանքներ, երբ Երրորդ անձանցից պահանջվի ապահովել անկախության որոշ պարտավորությունների կատարում, որոնք կիրառելի են PwC-ի նկատմամբ: Դա կախված կլինի PwC-ի հետ նրանց հարաբերությունների բնույթից. սա վերաբերում է Երրորդ անձանց, ովքեր աջակցում են PwC-ին մասնագիտական ծառայությունների մատուցման հարցում, և Երրորդ անձանց, որոնց հետ PwC-ն համագործակցում է շուկայում: Այդպիսի դեպքերում PwC-ն Երրորդ անձանց կոնդիցիոնալ իրենց պարտավորությունների վերաբերյալ:

PwC-ի կողմից նման պահանջ առաջադրվելու դեպքում, Երրորդ անձինք պետք է ապահովեն, և իրենց Անձնակազմին տեղեկացնեն անկախության որոշակի պարտավորությունների կատարման իրենց պատասխանատվության մասին:

## Շահերի բախում և զգայուն իրավիճակներ

### Մեր ստանդարտը

PwC-ն հանձնառու է բացահայտել և հասցեագրել շահերի իրական և հնարավոր բախումները և զգայուն իրավիճակները, որոնք կարող են առաջանալ իր գործունեության ընթացքում՝ նախքան ծառայություններն րնդունելը, սկսելը կամ շարունակելը:

PwC-ն շահերի բախումը սահմանում է որպես ցանկացած հանգամանք, որը կարող է կասկածի տակ դնել PwC-ի կողմից ծառայությունների մատուցման կամ PwC-ի գործունեության իրականացման ընթացքում օբյեկտիվություն պահպանելու կարողությունը: PwC-ն զգայուն իրավիճակը սահմանում որպես ցանկացած հանգամանք, որը կարող է առևտրային, հեղինակության կամ հաճախորդների հետ հարաբերությունների տեսանկյունից լուրջ խնդիր առաջացնել PwC-ի համար:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Եթե Երրորդ անձին հայտնի է դառնում փաստացի կամ հնարավոր շահերի բախման կամ զգայուն իրավիճակի մասին, որը կարող է ազդել նրա PwC-ի հետ կամ ի շահ վերջինիս աշխատանքի վրա, կամ ունենալ որևէ այլ ազդեցություն, նա պետք է ժամանակին տեղեկացնի PwC-ին:

Կախված հանգամանքներից՝ Երրորդ անձանցից կարող է պահանջվել ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ շահերի բախումը կամ զգայուն իրավիճակը կառավարելու համար:

---

## Արդար մրցակցություն

### Մեր ստանդարտը

PwC-ն հանձնառու է արդար մրցակցությանը և չի հանդուրժում հակամրցակցային գործունեության որևէ դրսևորում:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ ցանկացած անբարեխիղճ մրցակցությունից, համաձայն գործող հակամենաշնորհային և մրցակցային օրենսդրության և իրավական ակտերի պահանջների՝ ինչպես առանձին, այնպես էլ այլ կազմակերպությունների կամ անհատների հետ համատեղ: Մասնավորապես, Երրորդ անձինք՝ պարտավոր են ձեռք չբերել պաշտոնական կամ ոչ պաշտոնական է որևէ համաձայնություն, մասնավորապես՝ չսահմանել գներ, հատուցումներ կամ օգուտներ, կամ չհատկացնել հաճախորդներ, շուկաներ, կադրեր կամ ծառայություններ ի շահ PwC-ի, կամ նրա անունից, կամ այլ որևէ պայմանավորվածություններ PwC-ի հետ որևէ հարաբերությունների առնչությամբ, որոնք կհանգեցնեն մրցակցության անօրինական սահմանափակման:

---

## Պայքար կոռուպցիայի և կաշառակերության դեմ

### Մեր ստանդարտը

PwC-ն չի հանդուրժում կոռուպցիայի կամ կաշառակերության որևէ դրսևորում: Ուղղակիորեն կամ որևէ Երրորդ անձանց միջոցով կաշառք պահանջելը, ընդունելը, առաջարկելը, խոստանալը, տալը կամ այլ ոչ պատշաճ վճարումները, ներառյալ դուրացման վճարները, խստիվ արգելվում են:

PwC-ն կոռուպցիան սահմանում է որպես ոչ պատշաճ վճարումներ կամ այլ խթաններ, անօրինական/հանցավոր վարքագիծ, վստահված լիազորությունների չարաշահում մասնավոր շահի համար կամ ոչ պատշաճ առավելությունների/օգուտների տրամադրում: PwC-ն կաշառքը սահմանում է որպես՝ փող, նվեր կամ այլ արժեքներ (ներառյալ ոչ դրամական արժեքներ, օրինակ՝ պրակտիկա կամ դասընթաց) առաջարկելը, խոստանալը, տալը, ընդունելը կամ պահանջելը, որպես անօրինական, անբարեվարք, վստահությունը խաթարող արարքը խրախուսելու կամ պարգևատրելու միջոց, կամ նախատեսված է կոռուպցիոն ազդեցություն ստեղծելու ստացողի դատողության կամ որոշումների կայացման վրա: PwC-ն դուրացման վճարը սահմանում է որպես ցանկացած մեծության վճար, նույնիսկ փոքր գումարով, որը կատարվում է կանխիկ կամ բնաիրային ձևով, գործող կամ նախկին պետական պաշտոնյաներին, իրենց բնականոն գործառույթները կատարելու համար, որոնք նրանք ի սկզբանե պարտավոր են կատարել (օրինակ՝ թույլտվությունների, լիցենզիաների, վիզաների, փոստային կամ կոմունալ ծառայությունների տրամադրումն արագացնելու համար):

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

PwC-ի համար կամ ի շահ վերջինիս գործունեություն իրականացնելիս Երրորդ անձինք պարտավոր են չներգրավվել կոռուպցիայի, կաշառակերության կամ որևէ այլ գործողություններում (ներառյալ ոչ պատշաճ վճարումները), որոնք կարող են ընկալվել որպես ներգրավվածություն կոռուպցիայի կամ կաշառակերության մեջ: Սա ներառում է դուրացման վճարները կամ արտոնյալ պայմանների տրամադրումը կամ ստացումը, որը կարող է ընկալվել որպես կաշառք PwC-ի համար կամ վերջինիս անունից: Երրորդ անձինք չպետք է PwC-ի համար կամ անունից ընդունեն կամ տրամադրեն որևէ նվեր կամ շնորհք գործող կամ նախկին պետական պաշտոնյաներին կամ առևտրային կազմակերպություններին, առանց PwC-ից նախնական հավանություն ստանալու:

---

## Տնտեսական հանցագործություն և փողերի լվացում

### Մեր ստանդարտը

PwC-ն չի հանդուրժում տնտեսական հանցագործությունը, ներառյալ փողերի լվացումը, խարդախությունը և ահաբեկչության ֆինանսավորումը:

PwC-ն տնտեսական հանցագործությունը սահմանում է որպես անօրինական գործողություններ, որոնք իրականացվում են ֆինանսական կամ տնտեսական շահի համար: PwC-ն սահմանում է փողերի լվացումը որպես գործընթաց, որի միջոցով անօրինական գործունեությունից ստացված եկամուտները քողարկվում որպես օրինական աղբյուրներից ստացված միջոցներ: Մա ներառում է այդպիսի եկամուտների թաքցնելը, ձեռք բերելը, օգտագործելը կամ տիրապետելը կամ նման եկամուտների ձեռքբերմանը, օգտագործմանը, պահպանմանը կամ վերահսկմանը նպաստելը: PwC-ն սահմանում է խարդախությունը որպես անբարեխիղճ վարքագծի կամ հայտարարության ցանկացած ձև, որի նպատակն է՝ ստանալ ֆինանսական կամ անձնական շահույթ կամ կորուստ կամ վնաս պատճառել որևէ այլ երրորդ կողմի:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք չպետք է մատուցեն որևէ ծառայություն կամ ձեռք բերեն որևէ պայմանավորվածություն, որը կարող է նպաստել կամ հանգեցնել PwC-ի ուղղակի կամ անուղղակի ներգրավմանը տնտեսական հանցագործության մեջ, ներառյալ փողերի լվացման գործողություններում: Երրորդ անձինք չպետք է որևէ ֆինանսական միջոցներ ուղղեն կամ աջակցեն անօրինական կամ զեղծարարական գործունեությանը (օրինակ՝ ահաբեկչություն, հարկերից խուսափմանը, խարդախությանը):

---

## Ինսայդերական գործառնություններ/ առևտուր

### Մեր ստանդարտը

PwC-ն չի հանդուրժում ներքին (ինսայդերանա) տեղեկատվության առևտուրը կամ դրա ոչ պատշաճ բացահայտումը:

PwC-ն սահմանում է ներքին տեղեկատվությունը որպես կազմակերպության վերաբերյալ տեղեկատվություն (օրինակ՝ ֆինանսական կանխատեսումներ, միաձուլման և ձեռքբերման առաջարկներ և առանցքային անձնակազմի փոփոխություններ), որը հրապարակային չէ: Ներքին տեղեկատվությունը կարող է ստացվել ցանկացած աղբյուրից, ոչ միայն PwC-ից:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք չպետք է զբաղվեն ինսայդերական գործարքներով, ինսայդերական տեղեկատվության առևտրով, ներքին տեղեկատվության ոչ պատշաճ ձեռքբերմամբ կամ բացահայտմամբ՝ անկախ նրանից, թե արդյոք տեղեկատվությունը ձեռք է բերվել PwC-ի համար կամ ի շահ վերջինիս գործունեության ընթացքում:

Ընկերության մասին ներքին տեղեկատվություն ունեցող Երրորդ անձը չպետք է զբաղվի այդ ընկերության արժեթղթերի առք ու վաճառքով:

---

## Պատժամիջոցներ և արտահանման հսկողություն

### Մեր ստանդարտը

PwC-ն չի իրականացնում և չի օժանդակում որևէ այլ կողմի՝ իրականացնելու կիրառելի տնտեսական պատժամիջոցների պահանջների կամ արտահանման վերահսկողության օրենսդրության և իրավական ակտերի խախտման գործողություններ:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պետք է պահպանեն կիրառելի տնտեսական պատժամիջոցների և արտահանման վերահսկողության օրենսդրության և իրավական ակտերի պահանջները և խուսափեն այնպիսի գործողություններից, որոնք կարող են ընկալվել որպես կիրառելի տնտեսական պատժամիջոցների և արտահանման վերահսկողության պահանջների խախտում՝ իրենց կամ PwC-ի կողմից:



# Վստահության կառուցում միմյանց

PwC-ն Երրորդ անձանցից ակնկալում է ապահովել աշխատանքային պայմաններ, որոնք համապատասխանում են միջազգայնորեն հռչակված մարդու իրավունքներին և չափանիշներին, ներառյալ Մարդու իրավունքների միջազգային Խարտիայի և հիմնարար իրավունքներին առնչվող սկզբունքներին, որոնք ամրագրված են Աշխատանքի միջազգային կազմակերպության («ԱՄԿ») Հիմնարար սկզբունքների և աշխատանքային իրավունքների հռչակագրում:

## Աշխատանքի ընդունում և աշխատանքային հարաբերություններ

### Մեր ստանդարտը

PwC-ն հանձնառու է ապահովել աշխատանքի հավասար հնարավորություններ բոլորի համար:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք չպետք է խտրականություն ցուցաբերեն որևէ անհատի նկատմամբ աշխատանքի ընդունման կամ աշխատանքային հարաբերությունների ընթացքում: Սա ներառում է ռասայական, էթնիկական, գույնի, տարիքի, սեռի, գենդերային ինքնության կամ արտահայտման, սեռական կողմնորոշման, քաղաքական համոզմունքների, քաղաքացիության, ազգային ծագման, կրոնի, հաշմանդամության, ծնողական կարգավիճակի, տնտեսական/դասակարգային կարգավիճակի, վետերանի կարգավիճակի կամ որևէ այլ պաշտպանված կարգավիճակի կամ հատկանիշի հայտանիշով խտրականություն, որը չի առնչվում անձի արժանիքներին կամ տվյալ պաշտոնին բնորոշ պահանջներին:

## Աշխատավարձ և աշխատանքային ժամեր

### Մեր ստանդարտը

PwC-ն հանձնառու է պահպանել աշխատանքի վարձատրության, աշխատաժամանակի և արտաժամյա աշխատանքի վերաբերյալ գործող օրենսդրության և իրավական ակտերի պահանջները:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պետք է սահմանեն այնպիսի աշխատանքային ժամեր, աշխատավարձեր և արտաժամյա աշխատանքի վարձատրություն, որը համապատասխանում է իրենց գործունեության իրականացման երկրներում գործող օրենսդրության և իրավական ակտերի պահանջներին:

Երրորդ անձինք պարտավոր են առնվազն ապահովել աշխատանքի վարձատրության կիրառելի նվազագույն սահմանաչափի վճարում: Թեև հասկանալի է, որ արտաժամյա աշխատանքը կարող է անհրաժեշտ լինել, PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք գործողություններ կձեռնարկեն սահմանափակելու արտաժամյա աշխատանքը այն սահմաններում, որոնք ապահովում են արժանապատիվ և արդյունավետ աշխատանքային պայմաններ:

## Երրորդ անձանց փոխգործակցություն Անձնակազմի հետ

### Մեր ստանդարտը

PwC-ն հանձնառու է ապահովելու անվտանգ և ոչ խտրական աշխատանքային միջավայր:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պարտավոր են ապահովել ոտնձգությունից, բռնությունից, սպառնալիքից, խանգարող և այլ ոչ պատշաճ վարքագծից զերծ աշխատանքային միջավայր և չհանդուրժել որևէ տեսակի ոտնձգություն և այլ անհարգալից վարքագիծ, ներառյալ սեռական ոտնձգություն, խտրականություն և ահաբեկում:

---

## Մանկական աշխատանք

### Մեր ստանդարտը

PwC-ն հակադրվում է և չի հանդուրժում մանկական աշխատանքի որևէ ձև:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պարտավոր են չօգտագործել մանկական աշխատանքը և աշխատանքի ընդունել Անձնակազմ, որը համապատասխանում է նրանց գործունեության իրականացման երկրում կամ երկրներում սահմանված նվազագույն աշխատանքային տարիքի պահանջներին:

---

## Մարդկանց թրաֆիքինգ և ժամանակակից ստրկություն

### Մեր ստանդարտը

PwC-ն հակադրվում է և չի հանդուրժում մարդկանց թրաֆիքինգի կամ ժամանակակից ստրկության որևէ ձև:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պարտավոր են չներգրավվել և չաջակցել մարդկանց թրաֆիքինգին կամ ժամանակակից ստրկությանը, ներառյալ հարկադիր, պարտադիր կամ ոչ կամավոր աշխատանքին:

---

## Աշխատանքի անվտանգություն և առողջության պահպանում

### Մեր ստանդարտը

PwC-ն հանձնառու է ապահովել առողջ և անվտանգ աշխատանքային միջավայր՝ միջազգայնորեն հռչակված մարդու իրավունքներին համահունչ:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պարտավոր են ապահովել առողջ և անվտանգ աշխատանքային միջավայր՝ միջազգայնորեն հռչակված մարդու իրավունքներին համահունչ:

Երրորդ անձինք պետք է նվազագույնի հասցնեն և արձագանքեն առողջության և անվտանգության առումով աշխատավայրում տեղի ունեցող միջադեպերին և դժբախտ պատահարներին, և անձնակազմին ապահովեն համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով:

---

## Միավորումների ազատություն

### Մեր ստանդարտը

PwC-ի գործընկերները/տնօրենները և անձնակազմը իրավունք ունեն օրինական հիմունքով ձևավորել և միանալ իրենց ընտրած կազմակերպություններին և ձևավորել խաղաղ միավորումներ:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

PwC-ի ակնկալում է, որ Երրորդ անձինք իրենց Անձնակազմին հնարավորություն կտան օրինական կերպով ձևավորել և միանալ կազմակերպություններին, և ստեղծել խաղաղ միավորումներ:



# Վստահության կառուցում մեր համայնքներում

## Շրջակա միջավայրի պահպանություն

### Մեր ստանդարտը

PwC-ն պարտավորվում է նվազագույնի հասցնել իր գործունեության և մատակարարման շղթայի ուղղակի և անուղղակի բնապահպանական ազդեցությունները՝ շարունակաբար բարելավելով իր բնապահպանական արդյունավետությունը: Այդ պատճառով մենք համաշխարհային գիտահենք հանձնառություն ենք ստանձնել՝ հասնելու զուտ զրոյական արտանետումների մակարդակի մինչև 2030թ. նպատակների ներքո: Վերը նշվածի իրագործման համար մենք կնվազեցնենք մեր ջերմոցային գազերի արտանետումները 50%-ով, անցնելով մաքուր էներգիայի, աջակցելով ածխածնի կլանման ծրագրերին և մեր ընդհանուր արժեքային շղթայում կձգտենք հասնել ածխածնի երկօքսիդի արտանետումների առավելագույն կրճատման:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք իրենց ներդրումը կունենան կլիմայի տաքացումը սահմանափակելու ուղղությամբ, այդ թվում ջանքեր կգործադրեն բացահայտելու և կառավարելու իրենց կազմակերպության և մատակարարման շղթայի բնապահպանական ռիսկերն ու ազդեցությունները: Դա, մասնավորապես, կարող է ներառել ջերմոցային գազերի արտանետումների կրճատման գիտահենք թիրախների սահմանում, անցում վերականգնվող էներգիայի, թափոնների արդյունավետ կառավարում, ինչպես նաև բնության և ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում: Մատակարարներին նաև խրախուսվում է իրենց ներդրումն ունենալ բնության պաշարների նվազեցումը կասեցնելու և կենսաբազմազանության պաշտպանության ուղղությամբ:



# Վստահություն կառուցում տեղեկատվության

## Գաղտնիություն և տվյալների պաշտպանություն

### Մեր ստանդարտը

PwC-ն պահպանում է իր հաճախորդներին, իր գործընկերներին/տնօրեններին և անձնակազմին և իր հետ փոխգործակցող այլ անձանց առնչվող կամ պատկանող տեղեկատվության մասնավորությունը և գաղտնիությունը: PwC-ն պաշտպանում է անձնական և այլ գաղտնի տեղեկությունները՝ դրանց բոլոր ձևերով:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պարտավոր են գործածել և բացահայտել PwC-ի հետ փոխգործակցության ընթացքում ձեռք բերված անձնական տվյալները և գաղտնի տեղեկությունները միայն PwC-ի կողմից լիազորված և ուղղորդված եղանակով, և կիրառելի օրենսդրության և իրավական ակտերի պահանջներով սահմանված կարգով:

Երրորդ անձինք պարտավոր են պաշտպանել անձնական տվյալները և գաղտնի տեղեկատվությունը չարտոնված և անօրինական օգտագործումից, բացահայտումից, հասանելիությունից, կորստից, փոփոխությունից, վնասումից և ոչնչացումից:

## Մտավոր սեփականություն

### Մեր ստանդարտը

PwC-ն հանձնառու է պաշտպանել իր մտավոր սեփականությունը և հարգել այլ անձանց մտավոր սեփականության վավեր իրավունքները:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք կպահպանեն PwC-ի և այլ անձանց մտավոր սեփականության իրավունքները: Սա նշանակում է, մասնավորապես, որ Երրորդ անձինք պարտավոր են չօգտագործել PwC-ի մտավոր սեփականությունը PwC-ի կողմից չարտոնված կարգով, ինչպես նաև չօգտագործել այլ չլիցենզավորված ծրագրակազմ կամ տեխնոլոգիա՝ PwC-ի համար կամ վերջինիս հետ աշխատանքի ընթացքում կամ առնչությամբ:

## SS անվտանգություն

### Մեր ստանդարտը

PwC-ն պարտավորվում է պաշտպանել իրեն վստահված տեղեկատվությունը, ինչպես նաև ֆիզիկական և SS ակտիվները՝ տեղեկատվական անվտանգության նկատմամբ հսկողության միջոցառումների մշակման և ներդրման միջոցով:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

Երրորդ անձինք պարտավոր են օգտագործել PwC-ի պահանջներին համապատասխանող անվտանգության գծով հսկողության միջոցներ՝ PwC-ից, PwC-ի հաճախորդներից և այլ Երրորդ անձանցից ստացված տեղեկատվությունը, ներառյալ ֆիզիկական և էլեկտրոնային ակտիվները, պահպանելու և պաշտպանելու համար:

## Սոցիալական հարթակներ

### Մեր ստանդարտը

PwC-ն հանձնառու է պատասխանատու կերպով օգտագործել սոցիալական հարթակները և դրսևորել քաղաքավարի և հարգալից վարքագիծ իր կողմից իրականացվող առցանց հանրային հաղորդակցության ընթացքում:

### Կիրառելիությունը Երրորդ անձանց համար

PwC-ն ակնկալում է, որ Երրորդ անձինք զերծ կմնան սոցիալական հարթակներում անհարգալից, ոչ պրոֆեսիոնալ, հետապնդող, զրպարտող, խտրական և արգելված գործողություններից: Երրորդ անձինք պարտավոր են հանդես չգալ և չհաղորդակցվել PwC-ի անունից, չներկայանալ որպես PwC և չարտահայտել որևէ տեսակետ, որը վերագրելի է PwC-ին, բացառությամբ PwC-ի կողմից ուղղակիորեն լիազորված դեպքերի:



### Սույն Կանոնագրքի ընդունումը

PwC-ի և նրա հաճախորդների համար կամ վերջիններիս հետ աշխատող Երրորդ անձինք, որոնք ստացել են սույն Կանոնագիրքը, համաձայնում են.

- առաջնորդվել սույն Կանոնագրքով սահմանված պահանջներով և ակնկալիքներով.
- տրամադրել ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն՝ PwC-ի կողմից ձեռնարկվող համալիր ուսումնասիրության գործողությունները դիտարկելու համար. և
- պահպանել գործող օրենսդրության և իրավական ակտերի պահանջներն այն երկրում կամ երկրներում, որտեղ նրանք գործունեություն են իրականացնում:

# Շնորհակալություն

[www.pwc.com/thirdpartycodeofconduct](http://www.pwc.com/thirdpartycodeofconduct)